ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀՐԱՅՐ, ԼԻԱՆՆԱ, ՔՆԱՐԻԿ, ՀԱՄԼԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 2 նոյեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը՝ ուսումնասիրելով քաղաքացիներ Հրայր, Լիաննա, Քնարիկ, Համլետ Մանուկյանների անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը, **ՊԱՐԶԵՑ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացիներ Հրայր, Լիաննա, Քնարիկ, Համլետ Մանուկյանները 06.10.2010թ. դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել և որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես՝ վերջինիս 1-ին հոդվածի պահանջներին։

Սահմանադրական դատարանը նշում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 և 28-րդ հոդվածներում նախատեսված են սահմանադրական դատարան հասցեագրված դիմումներին ներկայացվող միասնական ընդհանուր ձևական պահանջներ, իսկ որպես անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման նույն օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ։ Մինչդեռ դիմողներն ընդհանրապես որևէ հիմնավորում չեն ներկայացրել վիճարկվող դրույթի սահմանադրականության վերաբերյալ։

Դիմումի և դրան կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողները վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը, ձևականորեն առաջ քաշելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց՝ ըստ էության բարձրացնում են այդ դրույթի կիրառման իրավաչափության խնդիրը։ Ուստի ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով և ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմամբ՝

սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմումի քննությունը ենթակա է մերժման՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմում։

Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ դիմումն ակնհայտ անհիմն է և դիմողները չեն առաջադրում դրույթի բովանդակությամբ պայմանավորված սահմանադրաիրավական վեճ։

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 1-ին կետով և 69-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասերով՝ ՀՀ սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

Քաղաքացիներ Հրայր, Լիաննա, Քնարիկ, Համլետ Մանուկյանների անհատական դիմումով գործի քննությունը մերժել։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2 նոյեմբերի 2010 թվականի
ՍԴԱՈ-101